		Վարչության 2022թ. հուլիսի 21-ի թիվ 01/055-335 L որոշում 03.08.2022թ		
Դրամական միջոցների ապահովվածությամբ հաշվարկային քարտով վարկային գծերի տրամադրման պայմաններ **Ուշադրություն.** **արտարժույթով տրամարդվող վարկային գծերի պայմանները կիրառելի են մինչև 30.05.2024թ. տրամադրված վարկերի համար, որից հետո վարկերի տրամադրումը դադարեցվում է:**				
1	**Հիմնական պայմաններ**			
1.1	Նպատակ	Սպառողական		
1.2	Հայտի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ		
1.3	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
1.4	Նվազագույն գումար	300.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
1.5	Առավելագույն գումար*	500.000.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ		
1.6	Տարեկան տոկոսադրույք	**1. Նույնանուն արժույթով գրավի դեպքում** Գրավադրվող դրամական միջոցների տոկոսադրույք +2%, բայց ոչ պակաս, քան Բանկի կողմից տվյալ արժույթով առաջարկվող ժամկետային ավանդների առավելագույն տարեկան տոկոսադրույքը:		
		2. ՀՀ դրամով գրավի դեպքում՝ Գրավադրվող դրամական միջոցների տոկոսադրույք +2%, բայց ոչ պակաս, քան Բանկի կողմից առաջարկվող ՀՀ դրամ արժույթով ժամկետային ավանդների առավելագույն տարեկան տոկոսադրույքը:		
		3. **Տարանուն արժույթով գրավի դեպքում, բացառությամբ ՀՀ դրամով գրավի դեպքում՝** Գրավադրվող դրամական միջոցների տոկոսադրույք +8%, բայց ոչ պակաս, քան Բանկի կողմից առաջարկվող ՀՀ դրամ արժույթով ժամկետային ավանդների առավելագույն տարեկան տոկոսադրույքը:		
1.7	Ժամկետ	Ավանդի ժամկետով, սակայն ոչ ավել, քան 60 ամիս		
1.8	Ապահովվածություն	Բանկում ներդրված ժամկետային ավանդ		
1.9	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն**	**1. Նույնանուն արժույթով և ՀՀ դրամով գրավի դեպքում՝ 94%**		
		2. Տարանուն արժույթով գրավի դեպքում (բացառությամբ ՀՀ դրամով գրավի)՝ **1) Գրավի արժույթը ԱՄՆ դոլար կամ Եվրո՝**		

		80% **2) Գրավի արժույթը ՌԴ ռուբլի՝ 60%**
2	**Միջնորդավճարներ**	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում
2.2	Տրամադրման (երկարաձգման) միջնորդավճար	Չի սահմանվում
2.3	Վարկի սպասարկման վճար	Չի սահմանվում
3	**Վարկի տրամադրում և սպասարկում**	
3.1	Տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ Բանկում գործող հաշվարկային քարտին
3.2	Վարկային գծի տրամադրման կարգ	Միանվագ կամ մաս-մաս
3.3	Վարկային գծի գումարի կանխիկացում	համաձայն Բանկի սակագների
3.4	Վարկային գծի մարման կարգ	Ոչ հավասարաչափ (դիֆերենցված), պարտադիր մարման չափով
3.5	Վարկային գծի տոկոսագումարների մարում	Ամսական, Վճարային ժամանակահատվածի ընթացքում
3.6	Պարտադիր մարման չափ	• Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժ, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախս (դեբիտորական պարտք), • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Պայմանագրով, Վարկային գծի պայմանագրով և (կամ) Խառը պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներ, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված տոկոսագումար (այդ թվում նաև ժամկետին չվերադարձված Կրեդիտի դիմաց հաշվարկված տոկոս և ժամկետանց տոկոսների տույժ)՝ առկայության դեպքում, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված Նվազագույն մարման սահմանաչափեր՝ առկայության դեպքում, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված)

		տոկոսագումար, • Նվազագույն մարման սահմանաչափ
3.7	Պարտադիր մարման չափի միջանկյալ ժամկետ	Վճարային ժամանակահատվածի ընթացքում
3.8	Փոխհաշվարկի օր	Յուրաքանչյուր ամսվա 1-ը, եթե այլ օր չի նշվել հաճախորդի դիմումում
3.9	Նվազագույն մարման սահմանաչափ	0%
3.1	Մարման արտոնյալ ժամանակահատված	Չի սահմանվում
3.11	Վճարային ժամանակահատված	Տվյալ հաշվետու ժամանակահատվածի երկրորդ օրվանից մինչև հերթական փոխհաշվարկի օրը ներառյալ
4	**Վարկառուին և գրավատուին ներկայացվող պահանջներ**	
4.1	Վարկառու	18 տարեկանը լրացած ֆիզիկական անձ
4.2	Գրավատու	Վարկառու
4.3	Վարկառուի/գրավատուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Չեն սահմանվում
4.4	Վարկառուի վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում
4.5	Քաղաքացիության և գրանցման նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում
4.5	Անձնական տվյալների նկատմամբ պահանջներ	• բջջային հեռախոսահամարի առկայություն • էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն
5	**Գրավի առարկային ներկայացվող պահանջներ**	
5.1	Գրավի առարկա	Որպես ավանդ Բանկում ներդրված դրամական միջոցներ և դրանց նկատմամբ պահանջի իրավունք
5.2	Գրավադրվող դրամական միջոցների քանակ	Մեկ վարկը կարող է ապահովված լինել Բանկում ներդրված մի քանի ավանդով, եթե բոլորի համար գործում են սպասարկման նույն պայմանները (տոկոսադրույք, արժույթ, տոկոսների վճարման կարգ)

5.3	Գրավի առարկայի նկատմամբ սահմանափակումներ	Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված ավանդը և դրանց նկատմամբ պահանջի իրավունքը կարող են հանդիսանալ գրավի առարկա, եթե դրանցում նշված միջոցները. 1. արգելանքի տակ չեն, 2. չեն հանդիսանում այլ (այդ թվում՝ երրորդ անձանց տրամադրված) վարկի (վարկային գծի, երաշխիքի և այլ պարտավորության) ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցով ապահովված բոլոր, ներառյալ նոր տրամադրվող, վարկերի հանրագումարի համար պահպանվում է վարկատեսակով սահմանված առավելագույն վարկ/գրավ հարաբերակցությունը
6	**Տույժ/տուգանք**	
6.1	Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսադրույք	24%
6.2	Ժամկետանց տոկոսագումարների գծով տարեկան տոկոսադրույք	0%
6.3	Վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	Չի սահմանվում
7	**Ապահովման միջոցի հաշվին վարկի մարում**	
	Ապահովման միջոցի հաշվին վարկային գծի (մայր գումարի, տոկոսների, տուգանքների, տույժերի և այլ վճարների՝ առկայության դեպքում, այսուհետ նաև՝ Վարկ) մարում (դրամական միջոցների գրավով վարկերի դեպքում)	Բանկն իրավունք ունի իրականացնել գրավի (ավանդի) հաշվին պարտավորությունների մարում հետևյալ կարգով՝
		1. Վարկառուի (գրավատուի) կողմից Վարկի մարման ժամանակացույցի համաձայն հերթական մարման պարտավորությունը չկատարվելու դեպքում (մինչև վարկի գործողության ավարտը) ընթացիկ պարտքի չափով իրականացնել գրավի (ավանդի) գումարի նվազեցում և ընթացիկ պարտավորության մարում, իսկ ավանդի մնացած մասը շարունակում է սպասարկվել ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:

		2. Ավանդի հաշվին մարման ժամանակացույցի համաձայն վարկի ընթացիկ պարտավորության ավտոմատ երկու հերթական մարումներից հետո հաճախորդի կողմից մարման ժամանակացույցի համաձայն պարտավորության հերթական չվճարման դեպքում իրականացնել վարկային պարտավորությունների չափով գրավի (ավանդի) նվազեցում (ավանդը ամբողջությամբ գրավ հանդիսանալու դեպքում՝ անհրաժեշտության դեպքում ավանդային պայմանագրի լուծում) և Վարկային գծի ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին: Այն դեպքում, երբ ավանդի հաշվին Վարկային գծի ամբողջական մարումից հետո առաջանում է դրական տարբերություն՝ գերազանցող գումարը փոխանցվում է Վարկառուի (գրավատուի) բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների վերահաշվարկը իրականացվում է ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:
		3. Վարկային գծի մարման վերջնաժամկետին Վարկային գիծը ամբողջությամբ մարված չլինելու դեպքում կամ Վարկային գիծը ամբողջությամբ ժամկետանցվելու դեպքում իրականացնել վարկային պարտավորությունների չափով գրավի (ավանդի) նվազեցում (ավանդը ամբողջությամբ գրավ հանդիսանալու դեպքում՝ անհրաժեշտության դեպքում ավանդային պայմանագրի լուծում) և Վարկային գծի ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին: Այն դեպքում, երբ ավանդի հաշվին Վարկային գծի ամբողջական մարումից հետո առաջանում է դրական տարբերություն՝ գերազանցող գումարը փոխանցվում է Վարկառուի (գրավատուի) բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների վերահաշվարկը իրականացվում է ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:
		4. Վարկառուի (գրավատուի) ցանկությամբ վարկի գործողության ընթացքում կամ վերջնաժամկետին կարող է լուծվել ավանդային պայմանագիրը և գումարը

		ուղղվել Վարկային գծի ամբողջական մարմանը: Ընդ որում, ավանդի ժամկետը լրացած չլինելու դեպքում ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարների վերահաշվարկը կատարվում է ավանդային պայմանագրի համաձայն:
8	**Վարկի երկարաձգում**	
	Վարկի երկարաձգման պայմաններ	Վարկային գծի երկարաձգումը իրականացվում է հաճախորդի դիմումի համաձայն, հետևյալ կարգով՝
		1. Ավանդի երկարաձգված ժամկետի չափով, ընդ որում՝ երկարաձգումից հետո վարկային գծի ժամկետը չպետք է գերազանցի պայմաններով սահմանված առավելագույն ժամկետը,
		2. Վարկային գծի երկարաձգման դիմումը հաճախորդի կողմից ներկայացվում է ոչ ուշ, քան վարկի ժամկետի ավարտից 2 աշխատանքային օր առաջ
9	**Վարկի տրամադրման/երկարաձգման վերաբերյալ որոշման կայացում**	
9.1	Դրական որոշման գործոններ	Վարկառուն/գրավատուն, ինչպես նաև գրավի առարկան բավարարում են սույն վարկատեսակով սահմանված պահանջներին
9.2	Որոշման կայացման ժամկետ	Առավելագույնը 1 աշխատանքային օր
9.3	Վարկի տրամադրման/երկարաձգման ժամկետ	Որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր
	* Մեկ փոխառուի սահմաչափը չի կարող գերազանցել 500.000.000 ՀՀ դրամ	
	** Տարանուն արժույթների դեպքում վարկի հասանելի գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ սահմանված փոխարժեքը:	